Նախագիծ

--------------------

Արձանագրային

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկության նախագծի մասին

--------------------------------------------------------------------------------

Հավանություն տալ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-231-21.12.2017-ՊԱ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկության նախագծին և այն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմ:

Լ. Մկրտչյան

Ամալյա Ենգոյան ------------------------------ ,,        ,, հունվարի 2018 թ.

Սեդրակ Բարսեղյան ------------------------ ,,        ,, հունվարի 2018 թ

Հովակիմ Հովակիմյան ______________ ,,        ,, հունվարի 2018 թ

ՆԱԽԱԳԻԾ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Պ-231-21.12.2017-ՊԱ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, առաջարկում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ ենթակետը հանել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է կարգավորել հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախանական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորողներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու հետ կապված հարաբերությունները:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ Նախագծի ընդունումը պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարչապետ

Ձեզ եմ ուղարկում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Միհրան Պողոսյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-231-21.12.2017-ՊԱ-011/0):

ԱՐԱ ԲԱԲԼՈՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 21

Ն - 1094

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մտից թիվ 012/48137
22 12 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

21 դեկտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Միհրան Պողոսյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկման համար գլխադասային նշանակել Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը:

ԱՐԱ ԲԱԲԼՈՅԱՆ

*ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-231-21.12.2017-ՊԱ-011/0*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետությունում» բառերից հետո լրացնել «կամ օտարերկրյա պետություններում» բառերը.

2) Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաեւ հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորողին: Սույն կետի համաձայն՝ քաղաքացուն տարկետում տրվում է մինչեւ ուսումնառության օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 19 տարին լրանալու օրը:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը եւ խնդիրները ներկայումս. ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք …:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում պարտադիր զինվորական ծառայության ենթակա բազմաթիվ քաղաքացիներ բնակվում են Հայաստանի Հանրապետությունից դուրս եւ ընդգրկվում են տվյալ երկրի հանրակրթական եւ նմանատիպ կրթական ծրագրերում:

Բացի այդ, քիչ չեն դեպքերը, երբ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող պարտադիր զինվորական ծառայության ենթակա քաղաքացիները ընդգրկվում են օտարերկրյա հանրակրթական հաստատություններում: Նման պարագայում բազմաթիվ են նաեւ այն դեպքերը, երբ օտարերկրյա պետություններում կրթություն ստացող, պարտադիր զինվորական ծառայության ենթակա Հայաստանի Հանրապետության քաղաքացու զորակոչային տարիքը լրանում է նախքան հանրակրթական ծրագրի ավարտը եւ քաղաքացին ակամայից խուսափում է զորակոչից կրթությունն ավարտելու պատճառով:

Տվյալ դեպքում «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը չի կարգավորում վերը նշված դեպքերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հանրակրթական, ինչպես նաեւ հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորելու ընթացքում տարկետման իրավունքը:

Կարգավորման նպատակը. Կարգավորման նպատակն է իրավական երաշխիքներ ստեղծել անձանց կրթության սահմանադրական իրավունքների իրացման համար:

Ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման պարագայում կերաշխավորվի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կրթություն ստանալու Սահմանադրությամբ ամրագրված իրավունքը անկախ կրթական հաստատության գտնվելու վայրի, կնպաստի պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու դեպքերի նվազմանը, ինչպես նաեւ կկարգավորվի օտարերկրյա պետություններում հանրակրթական հաստատություններում սովորող պարտադիր զինվորական ծառայության ենթակա Հայաստանի Հանրապետության քաղաքացիների տարկետում ստանալու իրավունքը:

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**Փոփոխվող հոդվածի վերաբերյալ**

**Հոդված 22. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմքերը**

1. Սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմք չունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է՝

1) առողջական վիճակի պատճառով.

2) ընտանեկան պայմաններից ելնելով:

2. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր ընտրված քաղաքացուն՝ պատգամավորական լիազորությունների ողջ ժամկետով:

3. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է նաև նպատակային ուսումնառության համար՝

1) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող քաղաքացուն, եթե նա Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ կնքում է քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր՝ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին: Սույն կետի համաձայն՝ քաղաքացուն տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 26 տարին լրանալու օրը.

2) Հայաստանի Հանրապետությունում _կամ օտարերկրյա պետություններում_ հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորողին: Սույն կետի համաձայն՝ քաղաքացուն տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 19 տարին լրանալու օրը:

_2) Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորողին: Սույն կետի համաձայն՝ քաղաքացուն տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 19 տարին լրանալու օրը:_

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում քաղաքացուն տարկետում տալու և տրված տարկետումը դադարեցնելու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն տրված տարկետման ժամկետի ավարտից հետո շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչելիս քաղաքացու առողջական վիճակի փորձաքննությունն իրականացվում է պարտադիր զինվորական ծառայության ենթակա պահեստազորի սպաների փորձաքննության համար սահմանված կարգով, ինչպես նաև նշված քաղաքացուն ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

5. Գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմք ունեցող կամ այդ հիմքով տարկետում ստացած, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի համաձայն տարկետում ստացած քաղաքացին կարող է իր դիմումի համաձայն հրաժարվել տարկետման իրավունքից և սույն օրենքով սահմանված կարգով զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության: